28164
hmj

28164

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. 21 հոկտեմբերի մենք ստորագրեալներս կազմեցինք այս պայմանագիրը հիմնելու մի ընկերութիւն «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» անունով և հետևեալ պայմաններով.

1. Ընկերութեան նպատակն է հրատարակել ինչպէս Երուանդ Լալայեանի մինչև այժմ հրատարակած «Ազգագրական Հանդէսը» և ուրիշ պարբերական հրատարակութիւններ, այնպէս և տպագրել գրքեր, գրքոյկներ, քարտէզներ և այլն առաւելապէս հայերէն լեզուով։ (Ա.ռ. օր. 4 հ, 65 յօդ.)։

ա. Ծանօթ. Եթէ որ Ազգագրական Հանդիսի խմբագիր-հրատարակիչ Երուանդ Լալայեանը չկամենայ շարունակել իւր հրատարակութիւնը այս ընկերութեան ներկայ պայմանագրի պայմանների սահմանում, նրան իրաւունք է տրւում վերցնելու Ընկերութիւնից այժմ նրան պատկանող Ազգագրական Հանդիսի հրատարակութիւնն ու խմբագրութիւնը և այս դէպքում Ընկերութեան գործունէութիւնը տարածւում է այս պայմանագրի առաջի յօդուածում յիշուած գործերի վրայ։

բ. Ծանօթ. Իւր նպատակներին հասնելու և իւր գործունէութիւնը ընդլայնելու համար Ընկերութիւնը կարող է պատշաճաւոր թոյլտւութեամբ բանալ գրավաճառանոցներ, տպարաններ, վիմագրատներ, կազմարաններ և այլն։

2. Ընկերութեան հիմնական դրամագլուխը կազմում է այս պայմանագիրը ստորագրող ընկերութեան անդամների յինական բուբլի բաժնեգներից։

ա. Ծանօթ. Բաժնեգինը կարելի է մաս մաս վճարել այսպէս. Ընկերութեան անդամ ընդունուելուց յետոյ առաջին երեք ամսում վճարում են առնուազը տասական բուբլի, իսկ մնացած քսան բուբլին հետևեալ չորս ամիսների ընթացքում. հակառակ դէպքում անդամ գրուողը մերժւում է, և նրա վճարած դրամը աւելացնում է Ընկերութեան հիմնական դրամագլխին. մաս մաս վճարած դրամների համար անդորրագրեր են տրւում Ընկերութեան նախագահի կամ նրա օրինաւոր փոխանորդի ստորագրութեամբ։

բ. Ծանօթ. Զորս հոգի խմիասին կարող են մի բաժին վերցնել և այս դէպքում երեքը մինին հաւասարամասնութիւն են տալիս և սա մասնակցում է ընդհանուր ժողովին մի ձայն ունենալու իրաւունքով։

3. Ընկերութեան իւրաքանչիւր բաժնետէրը Ա.ռ. Օրս. 85. յօդ. համաձայն պատասխանատու է միայն իւր վճարած բաժնեգնով։

4. Նոր անդամների ընդունելութիւնը կատարւում է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ և ամէն մի անձ, որ գրաւոր կերպով ցանկութիւն է յայտնել Ընկերութեան անդամ դառնալու, ընդունուել է և վերցրել յիսուն բուբլիանոց բաժին, դառնում է Ընկերութեան համազօր անդամ, թէև չէ ստորագրել այս պայմանագիրը և պարտաւոր է հնթարկուել այս պայմանագրին։

Ծանօթ.—Ընդհանուր ժողովը կարող է լիազօրութիւն տալ նախագահին, ընդհանուր ժողովից ընտրուած մի առանձին մասնաժողովի հետ ընդունել անդամներ քուէարկութեամբ։

5. Ընկերութեան բոլոր գործերի կառավարութիւնը և վերահսկողութիւնը յանձնւում է Երուանդ Աղէքսանդրեան Լալայեանցին մինչև Ընկերութեան բոլոր անդամների առաջին ընդհանուր ժողովը, երբ կընտրուի Ընկերութեան նախագահ և նրա փոխանորդ։

6. Ընդհանուր ժողովի թոյլտուութեամբ բաժինը կարելի է ուրիշ անձի յանձնել, փոխանցելի ստորագրութեամբ և Ընկերութեան կնքի դրոշմով։ Բաժնետիրոջ մահուամբ բաժինն անցնում է նրա օրինաւոր ժառանգին։

7. Բաժինը կորցնողը պարտաւոր է գրաւոր կերպով յայտնել այդ մասին Ընկերութեան նախագահին, միանգամայն նշանակելով կորցրած բաժնի համարը։ Նախագահը նրա հաշւով կը յայտարարէ այդ մասին և եթէ յայտարարուելու օրից երկու ամսուայ ընթացքում չի գտնուիլ կորցուած բաժինը, կըտրուի նորը, կորցրածի փոխարէն տրուած լինելու մակագրութեամբ։

8. Բաժնեէրը ժողովներում մի ձայն ունի իւր սեփական բաժնով և մինը Ընկերութեան անդամի հաւատարմաթղթով։ Հաւատարմաթուղթը չի կարելի տալ Ընկերութեան ոչ անդամին։ Երկու և աւելի բաժինների տէրը երկու ձայն ունի իւր բաժիններով և մի հաւատարմաթղթով։

Ծանօթ. Իրենց բաժնեգները լիովին չը հատուցանողները չեն կարող ձայն ունենալ։

9. Ընկերութեան գործերի կառավարութիւնը բաժանւում է երկու մասի. նախ վարչական և երկրորդ՝ խմբագրական։

ա) Վարչականը վարում է նախագահը։ Անդամների ընդհանուր ժողովը ընտրում է իւր միջից երեք տարով նախագահ, գանձապահ՝ դրամական գումարները և հաշիները պահելու, և քարտուղար՝ գրութիւնները վարելու և պահելու, նաև սրանց փոխանորդներ։

բ) Խմբագրականը ընտրում է տպագրութեան յարմար գրական և գեղարուեստական երկերը և ուղղում է նրանց։ Խմբագրական մանաժողովը բաղկանում է Ազգագրական Հանդիսի խմբագիր Երուանդ Լալայեանից ընդ միշտ և Ընկերութեան Թիֆլիսարնակ վեց անդամներից, որոնց ընտրում է բաժնեէրերի ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ երեք տարի ժամանակով։

Ծանօթ. Խմբագրական մանաժողովի պատահմամբ հեռացած անդամներին փոխարինելու համար բաժնեէրերի ընդհանուր ժողովում ընտրւում են երեք փոխանորդներ։ Փոխանորդների ծառայութեան ժամանակամիջոցը համապատասխանում է խմբագրական մանաժողովի հեռացած անդամների ծառայութեան մնացած ժամանակամիջոցին։

10) Ընդհանուր ժողովի համաձայնութեամբ ու հաճութեամբ նախագահին իրաւունք է տրւում Ընկերութեան անունից պայմաններ կապել, պայմանագրեր կազմել, ապահովելով դրանց տուգանքներ նշանակելով, Ընկերութեան կայքը կապալով տալ, վարկային հիմնարկութիւնների մէջ անդամակցել Ընկերութեան անունով, ընդունել մուրհակներ զեղջելու և զեղջել, փոխ առնել, մուրհակներ տալ, ստանալ չեկերով Ընկերութեան անունով վարկային հիմնարկութիւնների մէջ դրուած փողերը. նախագահին իրաւունք է տրւում առանց ընդհանուր ժողովի առանձին հաւանութեան կամ թոյլտուութեան ստանալ Ընկերութեան հասանելի գումարներն ու դրամները, ինչպէս և փոստից դրամական, ծրարային, հասարակ և ապահովուած թղթակցութիւնները։ Նախագահը իրաւունք ունի պաշտպանել Ընկերութեան շահերը կառավարութեան և դատարանի առաջ, յարաբերութեան մէջ մտնել Ընկերութեան գործերի վերաբերութեամբ կառավարչական և մասնաւոր հիմնարկութիւնների և բոլոր վարչութիւնների պաշտօնակատար անձերի հետ, ստանալ և ներկայացնել պատճէններ, վաւերաթղթեր, խնդիրներ և գանգատներ, ինչպէս և տալ ուր կամ ում իւր հայեցողութեամբ հարկաւոր է համարում թղթեր, ինչպէս և Ընկերութեան գործերի վերաբերութեամբ տալ ուրիշ անձերի լիազօրութիւն։ Ընդհանրապէս՝ նրան իրաւունք է տրւում կատարել այն բոլոր գործողութիւնները, որ այս Ընկերութեան նպատակը պահանջում է. իսկ Ընկերութեան առանձին գործողութիւնների համար նախագահը հաւատարմաթուղթ է տալիս մի կամ մի քանի ընկերների կամ կողմնակի անձանց. նրանից է նաև կախուած ծառայող անձանց վարձելը, վարձատրելը, տուգանքի ենթարկելն ու արձակելը։ Նախագահը հետևում է, որ Ընկերութեան պայմանագիրը, ընդհանուր ժողովների որոշումները, և առհասարակ Ընկերութեան գործերը կանոնաւոր և ճիշտ կերպով կատարուին։

11) Գանձապահը, որ ընտրւում է նախագահին օգնելու, պահում է Ընկերութեան դրամական գումարները և հաշիները։ Նա ընդունում է բոլոր դրամական վճարները և ծախսում է նախագահի առաջարկով և օրդերով։ Նա է կազմում տարեկան մանրամասն տեղեկագիր գանձարանի և հաշիների դրութեան մասին։

Ծանօթ. Ընկերութեան գանձապահը Ընկերութեան գումարներն ու մուտքերն ընթացիկ հաշւով գնում է տեղական բանկերից մինում։ Այս գումարները ծախսելու համար յետ վերցնելիս հարկաւոր է նախագահի և գանձապահի ստորագրութիւնը։

12) Ընկերութեան քարտուղարը կազմում է ընդհանուր ժողովների նիստերի, մանաժողովների արձանագրութիւնների և առհասարակ գիւանական գրութիւնները։

13) Հաշիներն ու գրքերը վերաստուգելու համար ընդհանուր ժողովում ընտրւում է երեք տարով Վերաստուգող Մանաժողով, երեք անդամներից բաղկացած։

14) Ընկերութեան ընդհանուր ժողովը հրաւիրւում է տարեկան մի անգամ, մայիս ամսի վերջից ոչ ուշ։ Նա կարող է նաև գումարուիլ արտակարգ կերպով 1) բաժնեէրերի ընդհանուր թուի $^1/_{10}$-ի, 2) Ընկերութեան և նախագահի և 3) Վերաստուգող Մանաժողովի գրաւոր պահանջմամբ։ Բաժնեէրերի և Վերաստուգող Մանաժողովի այսպիսի պահանջը նախագահը կատարում է այդ մասին յայտնելուց մի ամսից ոչ ուշ։ Ամեն մի ընդհանուր ժողովի, տեղի և ժամանակի, ինչպէս և պարապման նիւթերի մասին նախագահը յայտնում է բոլոր բաժնեէրերին լրագրական յայտարարութիւններով և եթէ կարելի է՝ առանձին ծանուցագրերով ժողովից գոնէ մի շաբաթ առաջ։

15) Որպէս զի Ընկերութեան ընդհանուր ժողովը կայացած համարուի՝ հարկաւոր է, որ Թիֆլիսում բնակուող բոլոր անդամների $^1/_5$ ներկայ գտնուի։ Եթէ պահանջուած թուով անդամներ չեն լինում, ժողովը չի կայանում և նորն է նշանակւում եօթ օրից ոչ ուշ։ Այս նոր ժողովը կայացած է և նրա որոշումները պարտաւորեցուցիչ են համարւում, որքան էլ որ անդամներ եկած չըլինէին։

16) Ընկերութեան ընդհանուր ժողովում բոլոր հարցերը վճռւում են բոլոր ներկայ եղողների ձայների առաւելութեամբ, բացի այս պայմանագրի տասնվեցերորդ կէտից, որ վերաբերում է պահեստի գումարը ծախսելուն, որը փոփոխելու համար պահանջւում է ներկայ եղողների $^2/_3$ համաձայնութիւնը։

17) Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովն ամէն անգամ ընտրում է իւր համար նախագահ, իսկ մինչև այդ՝ նախագահում է Ընկերութեան նախագահը։ Ընդհանուր ժողովների որոշումներն արձանագրւում են և պահւում նախագահի մօտ։ Այս արձանագրութիւնները պարտաւորեցուցիչ են բոլոր բաժնեէրերի համար։

18) Տարեկան ընդհանուր ժողովը քննում և հաստատում է անցած տարուայ տեղեկագիրը և եթէ անկանոնութիւններ կամ թիւրիմացութիւններ նկատի, միջոցներ է ձեռք առնում Ընկերութեան շահերը պաշտպանելու։ Նա քննում և հաստատում է ընթացիկ տարուայ համար նախահաշիւ, որ ներկայացնում է ընկերութեան նախագահը, իսկ մինչև այդ նախահաշիւի հաստատութիւնը՝ նախագահը առաջնորդւում է նախորդ տարուայ նախահաշւով։ Ընդհանուր ժողովը ընտրում է ընկերութեան նախագահ, գանձապահ, քարտուղար, խմբագրական և վերաստուգող մանաժողովների անդամներ

և սրանց փոխանորդներ, ինչպէս և քննում է միւս, նախապէս յայտարարուած հերթական գործերը։

19) Ընկերութեան բոլոր գործողութիւններից ստացած օգուտի 20% աւելացուում է պահեստի գումարին, որ կարող է գործածուել ամենածայրայեղ դէպքերում և ընդհանուր ժողովի որոշմամբ, 10% աւելացուում է հիմնական գումարին, իսկ 70% բաժանուում է բաժնետէրերի մէջ նրանց բաժինների համեմատ։

20) Ընկերութեան գործերի վերջնական ընդհատման միջոցին, բոլոր կայքը ծախսում է և ստացուած դրամը բաժանուում բաժնեատէրերի մէջ նրանց վճարների համեմատ։ Այս հարցը կարող է որոշուել միայն բաժնեատէրերի $^2/_3$-մասից կազմուած ընդհանուր ժողովում և $^2/_3$ ձայների առաւելութեամբ։

Ծանօթ. Ընկերութեան անդամները մինչև Ընկերութեան գործերի վերջնական ընդհատումը իրաւունք չունին ոչ մի դէպքում պահանջել՝ որ իրենց բաժնեգները վերադարձնուեն։

21) Ընկերութեան բաժնեգինը լիովին վճարած անդամների $^1/_5$-ից կազմուած ընդհանուր ժողովը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել և լրացնել այս պայմանագիրը, բացի §§ 1 (ծանօթութեամբ) 4, 6, 19 և 20 ծանօթութիւններով*)։

---

*) Այս պայմանագրի բնագիրը հաստատուած է Թիֆլիսի Դատարանի՝ պ. Լևան Մղերբովի ժամ 1900 թուի հոկտեմբերի 21-ին 10614 համարով։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL025080